From
the People of Japan

Ներառական և կարիքահեն համայնքային ոլորտային ծառայությունների համանախագծման և ներդրման մրցույթ

Տեխնիկական բնութագիր

Փուլ 1

Մրցույթին մասնակցելու համար հետաքրքրված ԿԵԽՄ-ները՝ **մինչև 2024թ. նոյեմբերի 17-ը,** կարող են դիմել՝ լրացնելով հետևյալ հայտը՝ https://forms.gle/81T46eGTNVVJxoyt6 :

Հայտը կարող են ներկայացնել ՀՀ բոլոր համայնքների ԿԵԽՄ-ները: ԿԽԵՄ ներկայացնող **թիմերը պետք է բաղկացած լինեն առավելագույնը 5 անդամներից**, որոնցից մեկը պետք է լինի տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքում ներգրավված անձ, որը հանդիսանում է նաև ԿԵԽՄ անդամ (համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար և/կամ աշխատակազմի ներկայացուցիչ, կին ավագանու անդամ), ԿԵԽՄ անդամներ ովքեր՝ հանդիսանում են համայնքի ակտիվ բնակիչներ և ունեն ծրագրերի նախագծման ու իրականացման փորձառություն, և բոնի տեղահանված անձ/ինք, ովքեր կամ հանդիսանում են ԿԽԵՄ անդամ կամ ունեն ցանկություն դառնալ ԿԽԵՄ անդամ և կարող են թիմին օգնել նախագծեր կյանքի կոչելու հարցում:

Հայտի հիման վրա ընտրված մինչև 10 համայնքների ԿԵԽՄ-ներ կմասնակցեն **ս.թ. նոյեմբերի 28-29-ին** կայանալիք կարողությունների զարգացման դասընթացին, որի ընթացքում կտրամադրվի վերականգման շրջափուլերի իրականացման մեթոդաբանությունը, ինչպես նաև համանախագծման վարժանքների իրականացման գործիքակազմեր (վերականգման շրջափուլի ընթացքում բարձրացրած խնդիրների առաջնահերթությունների և լուծումների առավել ներառական և կարիքահեն դարձնելու նպատակով): Դասընթացի մոդուլները նկարագրված են Հավելված 1-ում:

Փուլ 2

Դասընթացից հետո յուրաքանչյուր ԿԵԽՄ իր համայնքում կկազմակերպի թվով 12 վերականգման շրջափուլ ընդունող համայնքների բնակիչների և փախստականների մասնակցությամբ (ընդհանուր 120 վերականգման շրջափուլ): Վերականգման շրջափուլերի ընթացքում թիրախ խմբերի կողմից կվերհանվեն խնդիրներ և կառաջարկվեն լուծումներ, որոնց հիման վրա էլ կհամանախագծվեն

նորարար համայնքային ոլորտային ծառայություններ:

Փուլ 3

Համանախագծված ներառական նորարար համայնքային ոլորտային ծառայություններից ՄԱԶԾ-ի կողմից կընտրվեն լավագույն թվով 5 նախագիծ, որոնցից յուրաքանչյուրի կյանքի ներդրում և իրականացման համար ՄԱԶԾ-ն կծախսի մինչև 20 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:



Հավելված 1

Կարողությունների զարգացման դասընթացների թեմաներն են.

Մոդուլ 1. Վերականգնման շրջափուլերի հիմքերը

- ***Վերականգնման շրջափուլի հիմնական բաղադրիչները***
- ***Մոդերատորի դերը***
- ***Շրջափուլի մարտահրավերներ***. *շրջափուլերի ընթացքում հնարավոր խոչընդոտների բացահայտում և դրանց հաղթահարման ռազմավարություններ*
- ***Շրջափուլի իրականացում***
- ***Շրջափուլի կառուցվածքն ու ընթացքը***. *շրջափուլի ձևավորման և իրականացման համար քայլերի հաջորդականություն*

Մոդուլ 2. Վերականգնման շրջափուլերի իրականացում

- ***Անվտանգ տարածքի շրջափուլ***. *անհրաժեշտ պայմանների ապահովում՝ մասնակիցներին իրենց «ես-ը» ճանաչելու համար*
- ***Տրավմայի շրջափուլ***. *տրավմային դիմակայելու փորձ, ինքնաբացահայտում և ինքնաճանաչում*
- ***Դիմակայունության շրջափուլ***. *դժվարություններ հաղթահարելուց ի հայտ եկած սեփական ուժեղ կողմերի բացահայտում*
- ***Ավելի լավ աշխարհ ստեղծելու շրջափուլ***. *կրեատիվ և կոլեկտիվ գործողությունների խթանում, մարտահրավերների դիմակայում և ընդհանուր կարևոր և ավելի մեծ նպատակի սահմանում*
- ***Միասնական համայնքի շրջափուլ***. *մարդկանց փոխկապակցվածության մասին իրազեկվածություն, պատկանելության զգացում*
- ***Լավ կյանքի տեսլականի շրջափուլ***. *երազանքների քննարկում և դեպի ցանկալի ապագա շարժվելու քայլերի հստակեցում*

Մոդուլ 3. Երկխոսության խթանում և վստահության ձևավորում

- ***Ակտիվ լսելու, կարեկցանքի և ոչ բռնի հաղորդակցության գործիքներ***. *լսելու, հասկանալու և առանց դատելու կամ ագրեսիայի արձագանքելու հմտությունների զարգացում*
- ***Փախստականների և ընդունող համայնքների բնակիչների միջև փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման խրախուսման մեխանիզմներ***. *հարգանքի և փոխըմբռնման միջավայր ստեղծելու,*

մշակութային տարբերություններին անդրադառնալու և սոցիալական միասնականության մեթոդների ուսումնասիրում

- ***Կարեկցանքը և համընդհանուր հեռանկարները խթանելու վարժանքներ.*** *աշխարհը ուրիշի աչքերով տեսնելու և փոխըմբռնման բարելավման գործողություններ*
- ***Կոլեկտիվ տրավմա.*** *կոլեկտիվ տրավմայի հայեցակարգ, ազդեցությունը համայնքների վրա և հոգեբանական ու սոցիալական հետևանքները*
- ***Կոլեկտիվ տրավմայի հետ աշխատելու փոփոխության տեսություններ.*** *ընդհանուր տրավմայի ազդեցությունը, կոլեկտիվ վերականգնման համար անհրաժեշտ փոփոխություններ և սոցիալական երկարաժամկետ ինտեգրում*
- ***Կոլեկտիվ տրավմայի մեջ միջամտության հիպոթեզ.*** *բաց և անվտանգ տարածքների կարեկցանքի փոխանակմանը նպաստող վարկածների սահմանում և փորձարկում*

Մոդուլ 4. Համանախագծման վարժանքների անցկացում

- *Համանախագծման գործընթացը և դրա կարևորությունը համայնքի զարգացման հարցում*
- *Փախստականների և ընդունող համայնքների համար խնդիրների բացահայտման և առաջնահերթությունների որոշման գործիքներ*
- *Մտագրոհի և լուծումների համատեղ ընտրության մեթոդներ*

Մոդուլ 5. Լուծումների փորձարկում և իրականացում

- ***Լուծումների վավերացում.*** *տեղական համատեքստում առաջարկվող լուծումների իրատեսականությունը գնահատելու մեթոդներ*
- ***Պլանավորում և բյուջետավորում.*** *ընտրված համայնքներում համանախագծված ծրագրերի պլանավորման և իրականացման քայլեր*
- ***Մշտադիտարկում և գնահատում.*** *առաջընթացին հետևելու, ազդեցությունը չափելու և քաղված դասերը բացահայտելու գործիքակազմ*

Пт, 13 дек 2024 16:36

Ներառական և կարիքահեն համայնքային ոլորտային ծառայությունների համանախագծման և ներդրման մրցույթ

От: UNDP Gender Equality Portfolio <genderequality.portfolio.am@undp.org>

Кому: anna_chobanyan@mail.ru <anna_chobanyan@mail.ru>

Հարգելի՛ գործընկեր,

Շնորհակալություն ենք հայտնում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Գենդերային հավասարության պորտֆելի կողմից իրականացվող և Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ կազմակերպվող «Ներառական և կարիքահեն համայնքային ոլորտային ծառայությունների համանախագծման և ներդրման մրցույթին» ցուցաբերած Ձեր հետաքրքրության համար:

Ուրախ ենք տեղեկացնել, որ սույն մրցույթի շրջանակներում իրականացվող կարողությունների զարգացման դասընթացի առաջի դասընթացը տեղի կունենա դեկտեմբերի 18-19-ին՝ Ծաղկաձորի «Արարատ ռեզորթ» հյուրանոցում:

Խնդրում ենք **մինչ՝ ս. թ. դեկտեմբերի 14-ը, ժամը՝ 18:00-ն** հետադարձ նամակով հաստատել Ձեր և Ձեր թիմի մասնակցությունը, ինչպես նաև գրանցել թիմի անդամներին հետևյալ հղմամբ՝
https://forms.gle/qBdT5PkV2kSMw4wi8

Կից կարող եք գտնել նաև դասընթացի օրակարգի նախնական տարբերակը:

Հարցերի դեպքում կարող եք գրել genderequality.portfolio.am@undp.org էլ. փոստին կամ զանգահարել 077-14-74-53 (Վերգինե) հեռախոսահամարով:

Հարգանքով՝

ՄԱԶԾ Գենդերային հավասարության պորտֆելի թիմ

- Օրակարգ.pdf

From
the People of Japan

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ և ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Դեկտեմբերի 18-19, Արարատ ռեզորթ, Ծաղկաձոր

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և ընդունող համայնքների հիմնական ենթակառուցվածքների և սոցիալական ինտեգրման աջակցության» ծրագրի շրջանակներում նպատակ ունի խթանելու սոցիալական համերաշխությունը և բարելավելու ընդունող համայնքների կողմից մատուցվող հիմնական ծառայությունների որակը՝ Կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմինների (ԿԵԽՄ) միջոցով:

Փախստականների և ընդունող համայնքների փոխգործակցությունը կիրականացվի շրջանային երկխոսությունների միջոցով, որոնք բաց մասնակցության և երկխոսության միջնորդավորված մեթոդներ են: Շրջանային երկխոսությունները կստեղծեն ապահով տարածք, որտեղ ընդունող համայնքները և տեղահանված անձինք կկարողանան կիսվել իրենց մտահոգություններով, դժգոհություններով, փորձառություններով և ձգտումներով՝ փոխադարձ վստահության ստեղծման և համատեղ լուծումներ մշակելու համար:

Ծրագիրը կհզորացնի ԿԵԽՄ-ների կարողությունները՝ որպես երկխոսությունների հիմնական դերակատարներ՝ վերջիններիս զինելով անհրաժեշտ մեթոդներով և հմտություններով՝ կառուցողական երկխոսություն ապահովելու համար: Այս երկխոսություններից ստացված տվյալների միջոցով կհամանախագծվեն նորարար համայնքային ոլորտային ծառայություններ:

Օր 1. Կարողությունների և հմտությունների զարգացում

10:00–10:30	Ժամանում
10:30–11:00	Մասնակիցների գրանցում
11:00-11:15	Ողջույնի խոսք և ծանոթացում *Ժաննա Հարությունյան, ՄԱԶԾ Գենդերային հավասարության պորտֆելի ղեկավար*
11:15–11:30	Ծանոթացում
11:30-12:00	Ծրագրի նպատակների, ակնկալվող արդյունքների և գործողությունների ներկայացում *Մանե Առաքելյան, ՄԱԶԾ Պլանավորման, հաշվետվությունների և իրագեկման փորձագետ*
12:00-13:00	Համայնքային ծառայությունների համատեղ մշակման դերը սոցիալական համերաշխության համատեքստում *Հասմիկ Մանասյան, ՄԱԶԾ տեղական ինքնակառավարման եւ համայնքային ոլորտային ծառայությունների գծով ավագ փորձագետ*
13:00–14:00	Ճաշ
14:00–14:45	Կոլեկտիվ տրավմայի հասկացման և հաղթահարման մեթոդներ *Ի՞նչ է կոլեկտիվ տրավման. պատճառները, հետևանքները և դրսևորվան ձևերը տեղահանման և հակամարտությունների հետևանքով տուժած համայնքներում: Ի՞նչ է կոլեկտիվ հիշողությունը, ընտրված տրավման, սերնդեսերունդ փոխանցվող տրամվան (երեք «Տ»-եր): Տրավմայի հաղթահարման մեթոդները:*
14:45–16:00	Երկխոսության խթանում և վստահության ձևավորում *Ակտիվ լսելու, կարեկցանքի և ոչ բռնի հաղորդակցության հմտություններ* *Փախստականների և ընդունող համայնքների միջև փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման խթանման ռազմավարություններ*
15:30–16:00	Սուրճի ընդմիջում
16:00–18:00	Վերականգնման շրջափուլերի ներկայացում՝ որպես սոցիալական համախմբման գործիք
18:00–18:30	Ամփոփում և ինքնանդրադարձ *Հարց ու պատասխան*

Օր 2. Գործնական մաս

09:30–10:00	Առաջին օրվա ամփոփում *Հիմնական գաղափարների ամփոփում և վերանայում*
10:00–11:30	Վերականգնման շրջափուլերի միջոցով խնդիրների բացահայտում *Խմբային աշխատանք*
11:30-12:00	Սուրճի ընդմիջում
12:00–13:00	Վերականգնման շրջափուլերի հիմնական անդրադարձերը և վերլուծությունը
13:00–14:00	Ճաշ
14:00–15:30	Վերականգնման շրջափուլերի հիմնական կանոնների, տերմինաբանության և լավագույն փորձի ներկայացում *Հիմնական տերմինների ներկայացում* *Կանոններ և ուղեցույցներ*
15:30–16:00	Սուրճի ընդմիջում
16:00–16:30	Ամփոփում, առաջիկա անելիքների քննարկում